ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 047/2014-Լ

Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների գիշերակացի ապահովման, տրանսպորտային և սննդի հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգը հաստատելու մասին

23.05.2014թ. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-ին մասով,

Հրամայում եմ՝

1. Հաստատել <<Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների գիշերակացի ապահովման, տրանսպորտային և սննդի հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգը>>՝ համաձայն հավելվածի:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**

Հավելված
Արդարադատության
Ակադեմիայի Ռեկտորի
«23» մայիսի 2014թ.
N047-L հրամանի

ԿԱՐԳ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԳԻՇԵՐԱԿԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ՍՆՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. <<Արդարադատության ակադեմիայի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն վերապատրաստման վայրից դուրս մշտապես բնակվող դատավորներին, դատախազներին, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, դատական ծառայողներին, դատախազության աշխատակազմում պետական ծառայողներին և դատական կարգադրիչներին (այսուհետ՝ ունկնդիրներ) Ակադեմիան պետական բյուջեի միջոցների հաշվին տալիս է տրանսպորտային, գիշերավարձի և այլ ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցում կամ կազմակերպում նրանց փոխադրումն ու բնակության ապահովումը:
2. Ունկնդիրներին սննդի և տրանսպորտային ծախսերի համար փոխհատուցումը իրականացվում է ունկնդրի դիմումի հիման վրա *(Ձև 1)*՝ սույն կարգով նախատեսված պայմաններով:
3. Եթե ունկնդրի մշտակության բնակության վայրի հեռավորությունը Երևան քաղաքից 30 կմ և ավելի է, ապա.

3.1. նրան տրվում է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում՝ վերապատրաստման վայր ներկայանալու և վերադառնալու համար: Տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը տրամադրվում է՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքէջում (www.mtc.am) տեղադրված՝ Միջմարզային երթուղային ցանցի մրցույթով ներկայացված սակագների համաձայն՝ հիմք ընդունելով նվազագույն սակագինը.

3.2. նրա համար Ակադեմիայի հյուրանոցային համալիրում ապահովվում է կացարան, իսկ դրա անհնարինության դեպքում Ակադեմիայի միջոցներով կազմակերպվում է նրա գիշերակացը այլ վայրում.

3.3. նրան տրամադրվում է սննդի հետ կապված ծախսերի փոխհատուցում՝ օրական 3000 դրամի չափով:

4. Սույն կարգի 3.3.-րդ ենթակետում սահմանված փոխհատուցումը տրամադրվում է վերապատրաստման նպատակով վերապատրաստման վայրում փաստացի գտնվելու օրերի հաշվարկով:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**